ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությանն առընթեր ստեղծվել է հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության բաժին, որպես ինքնուրույն գիտահետազոտական հաստատություն:

Գիտական տեղեկատվության բաժնի գլխավոր խնդիրն է՝ բարելավել գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների ինստիտուտների և հիմնարկների գիտական տեղեկատվության պահանջը՝ գիտահետազոտական աշխատանքների ծրագրերի իրականացումն ապահովելու, գիտական մակարդակը բարձրացնելու, գիտական աշխատանքների ձևերն ու մեթոդները կատարելագործելու համար: Գիտական նոր օջախը միաժամանակ հանդիսանում է հանրապետությունում հասարակական գիտությունների, առաջին հերթին հայագիտության, գիտական տեղեկատվության կենտրոն: Այն պետք է համակցի ինչպես գիտությունների ակադեմիայի, այնպես էլ Սովետական Հայաստանի հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության օղակների գործունեությունը:

Գիտական տեղեկատվության կենտրոնը ունի հասարակագիտական, բանասիրական (հայագիտական), մատենագիտության-հրապարակումների գիտական խմբեր և ԳԱ հիմնակազմ գրադարանից ստացել է նրա մասնաճյուղը՝ հասարակական բաժանմունքի գրադարանը՝ շուրջ 200 հազար գրքով:

Սովետական Հայաստանում ստեղծված հասարակագիտական տեղեկատվության անդրանիկ կենտրոնը կոչված է վերլուծելու հայ ժողովրդի պատմությանն ու Հայկական ՍՍՀ-ին նվիրված հայրենական և արտասահմանյան պատմագիտական, փիլիսոփայական, տնտեսագիտական, բանասիրական (հայագիտական), մշակութային աշխատություններն ու նյութերը, մատենագիտական ընթացիկ և հետադարձ բնույթի տեղեկություն տալ Սովետական Հայաստանում և նրա սահմաններից դուրս հասարակական գիտությունների գծով հայերեն և օտար լեզուներով լույս տեսնող գիտական գրականության մասին: Բաժինը գիտական-գործնական կապեր է հաստատելու Սովետական Միության գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության ինստիտուտի և ՍՍՀՄ եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների համապատասխան կենտրոնների հետ, ինչպես և, գոյություն ունեցող կարգի համաձայն, արտասահմանյան երկրների, հատկապես սոցիալիստական երկրների և հայկական գաղթօջախների հետ:

Հայագիտական տեղեկատվության ամբողջականացման և լիարժեքության համար որոշակի նշանակություն ունեն սփյուռքահայ մտավորականության, մշակութային և հրատարակչական կազմակերպությունների հայագիտական աշխատությունների վերլուծական տեղեկատվությունը և մատենագիտությունը: Սփյուռքում հայագիտական ոչ քիչ գրքեր, հոդվածներ և ուսումնասիրություններ են հրապարակվում: Հատկապես ընփյուռքահայ առաջադիմական մամուլում նյութեր են տպագրվում հայ ժողովրդի պատմության ու մշակույթի մասին, որոնք արժանի են ուշադրության և ցանկալի է գիտական լայն շրջանառության մեջ դնել: Հայագիտական արժեքավոր նյութեր են լինում արտասահմանյան հանրագիտարաններում, գիտա-տեղեկատու գրականության և պարբերականների էջերում, հասարակական գիտությունների բնագավառի ժամանակակից հայ գիտնականների աշխատությունները գրախոսվում են արտասահմանյան մամուլում:

Սովետական Հայաստանի հայագիտական տեղեկատվության կենտրոնին, ինչ խոսք, այս ամենը լրջորեն հետաքրքրում է: Դրա համար էլ նա ջանալու է հավաքել այդ բոլորը, մատչելի դարձնել սովետական գիտնականներին:

Հայագիտական տեղեկատվության ստեղծումը գիտական մեծ արժեք ունի: Այն միաժամանակ հայրենասիրական գործ է, որին իրենց նպաստը պիտի բերեն ոչ միայն Սովետական Միության, այլև սփյուռքահայ մտավորականները, մշակութային, հրատարակչական և այլ բնագավառների կազմակերպությունները:

Օգտվելով առիթից, «Հայրենիքի ձայն» թերթի միջոցով դիմում ենք սփյուռքի բոլոր գիտական, մշակութային, հասարակական կազմակերպություններին, մտավորականներին, Սովետական Հայաստանի բոլոր բարեկամներին՝ աջակցել ՀՍՍՀ ԳԱ հայագիտական տեղեկատվության կենտրոնին, պարբերաբար ուղարկել արտասահմանում լույս տեսած և լույս տեսնող՝ հայ ժողովրդի պատմությանն ու Հայկական ՍՍՀ-ին նվիրված աշխատությունները, հայ պարբերականները, գրքերը, հայագիտական նյութերը (հասցեն՝ ԵՐԵՎԱՆ—1, ԱԲՈՎՅԱՆ 15): Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության բաժինն իր հերթին այդ կազմակերպություններին հնարավորին չափ կօգնի Սովետական Միությունում հրատարակված հայագիտական աշխատություններով՝ գրափոխանակության ճանապարհով: Տեղեկատվության բաժինը հրատարակելու է հասարակական գիտությունների ամենամեկ խնդիրները լուսաբանող գիտական տեղեկատվության բյուլետեններ (Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության բյուլետեն) և մատենագիտական թեմատիկ ցանկեր:

Հասարակական գիտությունների, այդ թվում՝ հայագիտության, հետագա զարգացման շահերը պահանջում են առավելագույն ուշադրություն նվիրել տեղեկատվության հաջող կազմակերպմանը:

Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության սեկտորի վարիչ